

«Փրոփերթի Դիվելոփմենթ Զամփնի» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվություններ
2013թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար**

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն	9



KPMG Armenia cjsc
 8th floor, Erebuni Plaza Business Center,
 26/1 Vazgen Sargsyan Street
 Yerevan 0010, Armenia

Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
 77, Երևան, 0010
 Վ.Սարգսյանի փ. 26/1,
 «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
 8-րդ հարկ

Telephone 7եռայխոս + 374 (10) 566 762
 Fax Ֆաքս + 374 (10) 566 762
 Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

**«Փրոփերթի Դիվելոպմենթ Քամփնի» ՓԲԸ
 Բաժնետիրոջը**

Մենք իրականացրել ենք «Փրոփերթի Դիվելոպմենթ Քամփնի» ՓԲԸ-ի («Ընկերություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Այս ֆինանսական հաշվետվությունների՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը, որպեսզի մշակի համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամտության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, 77 օրենսդրության համաձայն զրանցված և KPMG Europe LLP-ի կողմից վերահսկվող ընկերություն, չվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ

Եզրակացություն


Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Հանգամանքների շարադրում

Ուշադրություն ենք հրավիրում այն փաստին, որ ներակայացված համադրելի տվյալները, բացառությամբ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 16-ում նկարագրված ճշգրտումների, հիմնված են Ընկերության 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների վրա, որոնց աուդիտն իրականացրել է այլ աուդիտորական ընկերություն, որի 2013թ. մարտի 14-ի եզրակացությունում արտահայտվել է չձևավոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Որպես 2013թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 16-ում ներկայացված ճշգրտումների աուդիտը, որոնք կիրառվել են 2012թ. ֆինանսական հաշվետվությունների տվյալները վերահաշվարկելու համար: Մեր կարծիքով, նշված ճշգրտումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Ընկերության 2012թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում կամ կիրառել որևէ այլ ընթացակարգեր այդ ֆինանսական հաշվետվությունների հետ կապված, բացառությամբ նշված ճշգրտումների, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Ընկերության 2012թ. ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:


Տնօրեն
Տնօրեն




Տնօրեն
Տնօրեն

KPMG Armenia
«ԲԵՅ-ՓԻ-ԷՄ-ՉԻ Արմենիա» ՓԲԸ
10 հունիսի 2014թ.

հազ. դրամ	Ծնթգ.	31 դեկտեմբերի	31 դեկտեմբերի	1 հունվարի
		2013թ.	2012թ.	2012թ.
			Վերահաշվարկված	Վերահաշվարկված
Ակտիվներ				
Հիմնական միջոցներ		11,141	7,117	10,140
Ոչ նյութական ակտիվներ		106	125	143
Ներդրումային գույք	5	5,494,840	3,929,881	3,694,681
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ		117,950	123,339	125,165
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		1,499	1,822	35,099
Ոչ ընթացիկ ակտիվներ		5,625,536	4,062,284	3,865,228
Պաշարներ		1,322	-	-
Ընթացիկ հարկային ակտիվներ		2,012	1,827	-
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր		76,348	13,626	30,559
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	6	562,313	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	320,644	16,718	8,464
Ընթացիկ ակտիվներ		962,639	32,171	39,023
Ընդամենը ակտիվներ		6,588,175	4,094,455	3,904,251
Սեփական կապիտալ	8			
Բաժնետիրական կապիտալ		6,447,770	3,810,845	3,810,845
Կուտակված վնաս		(352,450)	(584,725)	(568,894)
Ընդամենը սեփական կապիտալ		6,095,320	3,226,120	3,241,951
Պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	13(գ)	-	242,083	228,653
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	445,087	418,850	418,850
Ոչ ընթացիկ պարտավորություններ		445,087	660,933	647,503
Վարկեր և փոխառություններ	13(գ)	-	202,155	-
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր		47,768	5,247	14,797
Ընթացիկ պարտավորություններ		47,768	207,402	14,797
Ընդամենը պարտավորություններ		492,855	868,335	662,300
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		6,588,175	4,094,455	3,904,251


«Փրովերթի Դիվելոպմենթ Բանկին» ՓԲԸ
 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնթգ.	2013թ.	2012թ.
Հասույթ		18,616	119,287
Ներդրումային գույքի իրական արժեքի աճ		88,709	-
Մաշվածություն և ամորտիզացիա		(2,639)	(3,380)
Աշխատավարձին վերաբերող հարկեր		(56,204)	(86,098)
Այլ վարչական ծախսեր		(22,463)	(13,019)
Այլ եկամուտ		1,852	90
Այլ ծախսեր		(1,786)	(144)
Գործառնական գործունեության արդյունքները		26,085	16,736
Ֆինանսական եկամուտ		20,857	2,945
Ֆինանսական ծախսեր		(4,005)	(33,857)
Զուտ ֆինանսական եկամուտ/(ծախսեր)		16,852	(30,912)
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը		42,937	(14,176)
Շահութահարկի գծով ծախս	9	(26,237)	(1,655)
Շահույթ/(վնաս) և ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		16,700	(15,831)

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2014թ. հունիսի 10-ին և ստորագրվել են վերջինիս անունից:


 Արտաշես Կազախնեցյան
 Գործադիր տնօրեն




 Լիլիթ Զավիկյան
 Գլխավոր հաշվապահ

«Փրօփերթի Դիվելոփմենթ Բանկին» ՓԲԸ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. ըստ նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների	3,810,845	(150,044)	3,660,801
Վերահաշվարկ	-	(418,850)	(418,850)
Մնացորդը առ 1 հունվարի 2012թ. (վերահաշվարկված)	3,810,845	(568,894)	3,241,951
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Վնաս տարվա համար	-	(15,831)	(15,831)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2012թ. (վերահաշվարկված)	3,810,845	(584,725)	3,226,120
Մնացորդը առ 1 հունվարի 2013թ. (վերահաշվարկված)	3,810,845	(584,725)	3,226,120
Ընդամենը համապարփակ եկամուտ			
Շահույթ տարվա համար	-	16,700	16,700
<i>Գործարքներ սեփականատերերի հետ` գրանցված ուղղակիորեն սեփական կապիտալում</i>			
Սովորական բաժնետոմսերի բողարկում	2,852,500	-	2,852,500
Սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի նվազում	(215,575)	215,575	-
Ընդամենը գործարքներ սեփականատերերի հետ	2,636,925	215,575	2,852,500
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2013թ.	6,447,770	(352,450)	6,095,320

«Փրուվերթի Դիվերտիմենթ Բանկին» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Ծնթգ.	2013թ.	2012թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ		21,850	142,784
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(41,976)	(12,865)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(35,387)	(79,982)
Վճարված հարկեր՝ բացառությամբ շահութահարկի		(21,748)	(9,425)
Գործառնական գործունեության միջոցով (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ		(77,261)	40,512
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Ներդրումային գույքի ձեռքբերում		(1,476,846)	(216,922)
Հիմնական միջոցների ձեռքբերում		(6,645)	-
Ժամկետային ավանդների տեղաբաշխում		(577,068)	-
Ստացված տոկոսներ		17,150	-
Ներդրումային գործունեության միջոցով օգտագործված զուտ դրամական միջոցներ		(2,043,409)	(216,922)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Մուտքեր բաժնետիրական կապիտալի թողարկումից		2,852,500	5
Մուտքեր փոխառություններից		-	356,377
Փոխառությունների մարում		(446,586)	(172,766)
Վճարված տոկոսներ		(3,659)	(667)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		2,402,255	182,949
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		281,585	6,539
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ		16,718	8,464
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		22,341	1,715
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ	7	320,644	16,718

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 30-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1. Ներածություն

(ա) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա Հայաստանի գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Այսպես գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

(բ) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Փրոփերթի Դիվելոփմենթ Քամինի» ՓԲԸ-ն («Ընկերություն») հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է 2007թ-ին:

Ընկերությունն իրականացնում է Երևանի կենտրոնում գտնվող 8 հարկանի բիզնես կենտրոնի շինարարությունը: Այսպես ընկերությունը մտադիր է զբաղվել այս բիզնես կենտրոնի շահագործմամբ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյանի փող. 2:

Ընկերության սեփականատերն է «Ամերիա Գրուպ (Սի-Ուայ) Լիմիթիդ»-ը (մայր կազմակերպություն): Ընկերության վերջնական վերահսկող անձն է հանդիսանում Ռուբեն Վարդանյանը:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 13-ում:

2. Հաշվապահական հաշվառման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՄ») պահանջների համաձայն:

(բ) Զափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ներդրումային գույքի, որը հաշվառվում է իրական արժեքով:

3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում են այլ նշումներ:

4. Գնահատումների և դատողությունների օգտագործում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող տվյալների վրա առավել մեծ ազդեցություն ունեցող հաշվապահական հաշվառման քաղաքականություններում կիրառվող հիմնական ենթադրությունների, հաշվարկների անորոշությունների և դատողությունների վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ծանոթագրություն 5-ում՝ «Ներդրումային գույք»:

Իրական արժեքի չափում

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ընկերությունը կիրառում է վերահսկողության ընթացակարգ իրական արժեքի չափման համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Ընկերությունը, հնարավորության սահմաններում, օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները: Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների, հիմք ընդունելով գնահատման մեթոդներով օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների վրա հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են փոփոխությունները:

Իրական արժեքի չափման ժամանակ կատարվող ենթադրությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 5-ում՝ «Ներդրումային գույք»:

5. Ներդրումային գույք

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը որոշվել արտաքին անկախ գնահատողի՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից: Խմբի ներդրումային գույքի իրական արժեքի գնահատվում է անկախ գնահատողների կողմից յուրաքանչյուր տարի:

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը դասվել է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակին:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ներդրումային գույքի իրական արժեքի չափման տարեսկզբի և տարեվերջի մնացորդների համադրումը:

հազ. դրամ	2013թ.	2012թ.
		Վերահաշվարկված
Մնացորդը առ 1 հունվարի	3,929,881	3,694,681
Չեղբբերումներ	1,476,250	235,200
Իրական արժեքի փոփոխություն	88,709	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի	5,494,840	3,929,881

Ներդրումային գույքը ներառում է Երևանի կենտրոնում գտնվող հողատարածքը և այդ հողատարածքի վրա գտնվող գույքը, որի հետ կապված իրականացվում են շինարարական աշխատանքներ: Խումբն գույքը ձեռք է բերել բազմափուլ բիզնես կենտրոն կառուցելու նպատակով: Գույքը վարձակալությամբ չի հանձնվում երրորդ անձանց:

Գնահատման մեթոդ և նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ

Գնահատումն իրականացվել է դրամական միջոցների գեղջված հոսքերի մեթոդով: Գնահատման մեթոդը դիտարկում է գույքը հասատատված նախագծի հիման վրա երկու տարվա ընթացքում կառուցելու համար պահանջվող դրամական միջոցների արտահոսքի ներկա արժեքը և դրամական միջոցների գուտ հոսքերը, որոնք կառաջանան գույքի շինարարության ավարտից հետո՝ հաշվի առնելով վարձակալությունից ստացվելիք եկամուտը, օգտագործման ակնկալվող դրույքները և գույքի պահպանման ծախսերը: Դրամական միջոցների ակնկալվող գուտ հոսքերը գեղջվում են՝ կիրառելով ռիսկի գործոնով ճշգրտված գեղջի դրույքը: Դրամական միջոցների հոսքերը կանխատեսվել են 7 տարի ժամանակաշրջանի համար, արտահայտված են ԱՄՆ դոլարով և չեն ներառում սղաճի ազդեցությունը:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են օգտագործված նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալները և խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունների կիրառման հետևանքները:

Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ	Խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություն	Գնահատված իրական արժեքը կավելանա (կնվազի)
Վարձակալությունից ստացվելիք եկամտի միջին դրույքը կազմում է 33 ԱՄՆ դոլար (ներառյալ ԱԱՀ) կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում	Վարձակալությունից ստացվելիք եկամտի դրույքը 10% բարձր էր (ցածր էր)	1,321,307 հազար դրամով (1,201,188 հազար դրամով)
Օգտագործման դրույքը կազմում է 95%	Օգտագործման դրույքը կազմում էր 80%	(1,857,946 հազար դրամով)
Ռիսկի գործոնով ճշգրտված գեղջի դրույքը կազմում է 11.08%	Ռիսկի գործոնով ճշգրտված գեղջի դրույքը ցածր էր (բարձր էր) 1 տոկոսային կետով	1,395,107 հազար դրամով (1,134,862 հազար դրամով)
Կանխատեսվող ժամանակաշրջանի վերջում աճի դրույքը կկազմի 1%	Կանխատեսվող ժամանակաշրջանի վերջում աճի դրույքը բարձր էր (ցածր էր) 1 տոկոսային կետով	936,265 հազար դրամով (685,365 հազար դրամով)
Ներդրումները կազմում են 23.5 միլիոն ԱՄՆ դոլար	Ներդրումները 10%ցածր էին (բարձր էին)	593,766 հազար դրամով (736,697 հազար դրամով)

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներդրումային գույքի իրական արժեքը արտաքին անկախ գնահատողի կողմից որոշվել էր օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի տեսանկյունից նմանատիպ գույքի առք ու վաճառքի վերջին գործարքների շուկայական գների հիման վրա, օգտագործելով 0.65-ից 1.3 տիրույթում ընկած գործակիցները ելակետային գները ճշգրտելու համար՝ օգտագործման, տարիքի, գտնվելու վայրի և վիճակի հետ կապված տարբերությունների դեպքում: Գույքի գնահատման համար օգտագործվող մեթոդի փոփոխության պատճառն առկա շենքերի հետ կապված բարելավման և քանդման աշխատանքների իրականացումն էր 2013թ-ին:

6. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

հազ. դրամ	2013թ.	2012թ.
Ժամկետային ավանդներ	562,313	-

Ընկերությունն ունի տեղաբաշխված միջոցներ հինգ խոշոր հայկական բանկերում: Բանկերում տեղաբաշխված միջոցները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Ավանդները տեղաբաշխված են մինչև երեք ամիս ժամկետով հաշվետու ամսաթվից: Միջին արդյունավետ տոկոսադրույքը կազմում է 3.4%: Ժամկետային ավանդների իրական արժեքը մոտավորապես հավասար է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2013թ.	2012թ.
Ընթացիկ հաշիվներ	320,644	16,718

Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են հինգ խոշոր հայկական բանկերում: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների իրական արժեքը մոտավորապես հավասար է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

8. Կապիտալ և պահուստներ

(ա) Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, բացառությամբ այն դեպքերի, երբ ներկայացվում են այլ տվյալներ

	Սովորական բաժնետոմսեր	
	2013թ.	2012թ.
Հունվարի 1-ի դրությամբ թողարկված	38,108,450	38,108,450
Կանխիկի դիմաց թողարկված	33,750,000	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված	71,858,450	38,108,450
Անվանական արժեք	AMD 97	AMD 100
Թողարկված բաժնետիրական կապիտալ (հազ. դրամ)	6,970,270	3,810,845
Չվճարված բաժնետիրական կապիտալ (հազ. դրամ)	(522,500)	-
Ճանաչված բաժնետիրական կապիտալ (հազ. դրամ)	6,447,770	3,810,845

Բոլոր սովորական բաժնետոմսերը տալիս են հավասարազոր իրավունքներ Ընկերության մնացորդային ակտիվների նկատմամբ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

2013թ. փետրվարի բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշում կայացվեց մայր կազմակերպության համար թողարկել 33,750,000 սովորական բաժնետոմս՝ 100 դրամ իրագործման արժեքով: 2013թ. մարտի բաժնետերերի ընդհանուր ժողովում որոշվեց սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնել մինչև 97 դրամ:

Բաժնետիրական կապիտալի չվճարված գումարը նվազեցվել է բաժնետիրական կապիտալից, քանի որ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն չվճարված բաժնետոմսերը կարող են վերադարձվել Ընկերությանը:

(բ) Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության ՖՀՄ համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2013թ. համար Ընկերությունը շահաբաժիններ չի հայտարարել (2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահաբաժիններ չեն հայտարարվել):

9. Շահութահարկ

Ընկերությունը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով:

հազ. դրամ	2013թ.	2012թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս		
Ընթացիկ տարի	-	(1,655)
	-	(1,655)
Հետաձգված հարկի գծով ծախս		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(26,237)	-
Ընդամենը ծախս հարկի գծով	(26,237)	(1,655)

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

	2013թ.		2012թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) նախքան շահութահարկով հարկումը	42,937	100	(14,176)	100
Շահութահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	(8,587)	(20.0)	2,835	(20)
Չնվազեցվող ծախսեր	(17,650)	(41.1)	(4,490)	31.7
	(26,237)	(61.1)	(1,655)	11.7

(ա) Ծանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին.

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2013թ.	2012թ.	2013թ.	2012թ. Վերահաշ- վարկված	2013թ.	2012թ. Վերահաշ- վարկված
հազ. դրամ						
Ներդրումային գույք	-	-	(449,987)	(418,850)	(449,987)	(418,850)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	4,900	-	-	-	4,900	-
Հարկային պարտավորություններ	4,900	-	(449,987)	(418,850)	(445,087)	(418,850)

(բ) Հետաձգված հարկերի մնացորդների շարժ

հազ. դրամ	1 հունվարի 2013թ. Վերահաշվարկված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2013թ.
	Ներդրումային գույք	(418,850)	(31,137)
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնաս	-	4,900	4,900
	(418,850)	(26,237)	(445,087)
հազ. դրամ	1 հունվարի 2012թ. Վերահաշվարկված	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2012թ. Վերահաշվարկված
Ներդրումային գույք	(418,850)	-	(418,850)

10. Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն դեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ իր գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու և շուկայի մասնակիցների վստահությունը պահպանելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Ընկերության գործառնական գործունեությունից ստացվող դրամական միջոցներով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Չեռնարկելով այս քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Ընկերության նկատմամբ կիրառելի չեն կապիտալի կառավարման արտաքին պահանջներ:

11. Ռիսկերի կառավարում

Իր գործունեությունն իրականացնելիս Ընկերությունը հիմնականում ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերին:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի կառավարման, հիմնական ռիսկերի կառավարման վերահսկողության, ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների սպագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և վերահսկել ռիսկը ընդունելի սահմաններում:

(i) *Տոկոսադրույքի ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների սպագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է տոկոսադրույքի ռիսկին իր ժամկետային ավանդների հետ կապված 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (ծանոթագրություն 6): 2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր տոկոսակիր ֆինանսական գործիքներն իրենցից ներկայացնում են ֆիքսված դրույքով գործիքներ:

(ii) *Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների սպագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ստորև ներկայացված է Ընկերության ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին:

հազ. դրամ	ԱՄՆ դոլարով արտահայտված	ԱՄՆ դոլարով արտահայտված
	2013թ.	2012թ.
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	562,313	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	320,442	16,313
Վարկեր և փոխառություններ	-	(444,238)
Առևտրական կրեդիտորական պարտքեր	(14,252)	-
Զուտ ենթարկվածությունը	868,503	(427,925)

2013թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժեզրկումը ԱՄՆ դոլարի փոխարժեքի նկատմամբ կավելացներ/(կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը համապատասխանաբար 86,850 հազար դրամով և (42,792) հազար դրամով: Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթի փոխարժեքների այն տատանումների վրա, որոնք Ընկերությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունն իրականացնելիս Ընկերությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը ԱՄՆ դոլարի փոխարժեքի նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցությունը:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Ընկերությունն ունի քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը կառավարելու համար, որոնք նախատեսում են ժամկետային ավանդների և դրամական միջոցների տեղաբաշխում վստահելի բանկերում:

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կարող է դժվարություններ ունենալ ֆինանսական գործիքների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար:

12. Պայմանական դեպքեր

(ա) Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր տարածքների համար, այն ապահովագրված չէ նաև գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի անբարենպաստ ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Դատական վարույթներ

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կարող է հանդես գալ որպես դատական վարույթների և հայցերի կողմ: Գեկավարությունը գտնում է, որ ընդհանուր պարտավորությունը (եթե այդպիսին լինի), որը կարող է առաջանալ նման վարույթների և հայցերի արդյունքում, էական անբարենպաստ ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

(գ) Հարկային պայմանական պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Գեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

13. Կապակցված կողմեր

(ա) Մայր կազմակերպություն և վերջնական վերահսկող կողմ

Ընկերության անմիջական մայր կազմակերպությունն է հանդիսանում Կիպրոսում գրանցված «Ամերիա Գրուպ (Մի-Ուայ) Լիմիթիդ»-ը (նախկինում «ՏԴԱ Հոլդինգս Լիմիթիդ»):

Ընկերության վերջնական վերահսկող անձն է հանդիսանում Ռուբեն Վարդանյանը:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

(i) Ղեկավարության վարձատրությունը

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը:

հազ. դրամ	2013թ.	2012թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	72,836	37,397

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

հազ. դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի ակտիվ/(պարտավորություն)	
	2013թ.	2012թ.	2013թ.	2012թ.
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն				
Ապրանքների և ծառայությունների վաճառք				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	10,177	118,251	40	6,847
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	17,258	3,205	(13,200)	-
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություն	-	-	12,654	641
Տոկոսային եկամուտ				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	20,857	-	-	-
Տոկոսային ծախս				
Մայր կազմակերպություն	-	21,438	-	-
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	3,186	1,032	-	-

հազ. դրամ	Գործարքի գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի ակտիվ/(պարտավորություն)	
	2013թ.	2012թ.	2013թ.	2012թ.
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն				
Ներդրումային գույքի ձեռքբերում				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	1,066,309	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություն	-	-	320,644	16,718
Բանկերում տեղաքաշված միջոցներ				
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություն	-	-	562,313	-
Ստացված փոխառություններ				
Մայր կազմակերպություն	-	-	-	(242,083)
Մայր կազմակերպության այլ դուստր կազմակերպություններ	-	-	-	(202,155)

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մայր կազմակերպությունից ստացված փոխառությունները տոկոսակի չեն և ենթակա են մարման 2014թ. հունիսի 1-ին: Փոխառությունը մարվել է ժամկետից շուտ 2013թ. ընթացքում:

14. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2014թ. ապրիլին Ընկերությունը ստորագրել է 18 միլիոն ԱՄՆ դոլար գումարով վարկային պայմանագրեր՝ ներդրումային գույքի շինարարությունը ֆինանսավորելու նպատակով:

2014թ. փետրվարին մայր կազմակերպությունն ամբողջովին մարել է 2013թ-ին Ընկերության բաժնետոսմերի ձեռքբերման համար չվճարված 522,500 հազար դրամ գումարը (ծանոթագրություն 8):

15. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում» ստանդարտը, ներառյալ, որպես հետևանք, այլ ստանդարտների փոփոխությունները՝ 1 հունվարի 2013թ. սկզբնական կիրառման ամսաթվով:

ՖՀՄՍ 13-ը սահմանում է ընդհանուր հիմունքներ իրական արժեքի չափման և իրական արժեքի չափման վերաբերյալ բացահայտումներ կատարելու համար, այն դեպքերում, երբ նման չափումները պահանջվում կամ թույլատրվում են այլ ՖՀՄՍ-ներով: Մասնավորապես, այն միասնականացնում է իրական արժեքի սահմանումը՝ հատկորոշելով այն որպես գին, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Այն նաև փոխարինում և լրացնում է այլ ՖՀՄՍ-ներով, այդ թվում՝ ՖՀՄՍ 7-ով, պահանջվող իրական արժեքի բացահայտումները: Արդյունքում, Ընկերությունը ներկայացրել է լրացուցիչ բացահայտումներ իրական արժեքի չափման համար:

Արդյունքում, Ընկերությունը կիրառել է իրական արժեքի նոր սահմանումը: Փոփոխությունն էական ազդեցություն չի ունեցել ակտիվների և պարտավորությունների չափման վրա:

16. Համադրելի տվյալների ճշգրտում

2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ դեկավարությունը հայտնաբերել է ստորև ներկայացված հարցերին վերաբերող որոշ անճշտություններ 2012թ. ֆինանսական հաշվետվություններում:

- 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը պատկանող որոշ գույքը ներկայացվել է որպես հիմնական միջոց, մինչդեռ այն պահվել է վարձակալությունից եկամուտ վաստակելու և ներդրումային գույքը բարելավելու նպատակով՝ այդպիսով համապատասխանելով ներդրումային գույքի սահմանմանը:
- 2011թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ն ներկայացվել է ընթացիկ ակտիվների կազմում, մինչդեռ ակնկալվում էր, որ այս գումարները կիրացվեին հաշվետու ամսաթվից հետո տասներկու ամսից հետո և, այդ իսկ պատճառով, պետք է ներկայացվեին ոչ ընթացիկ ակտիվների կազմում:
- Ներդրումային գույքին վերաբերող հետաձգված հարկային պարտավորությունը չի ճանաչվել 2011թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Ղեկավարությունը վերահաշվարկել է համադրելի տվյալներն այս անճշտություններն ուղղելու համար: Ստորև ամփոփ կերպով ներկայացված է անճշտությունների ուղղման ազդեցությունը 2011թ. և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների վրա:

հազ. դրամ	Հիմնական միջոցներ	Ներդրումային գույք	Ոչ ընթացիկ փոխհատուցելի ԱԱՀ	Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր և ընթացիկ հարկային ակտիվներ	Հետաձգված հարկային պարտավորություններ	Զբաղիված շահույթ
Մնացորդը ըստ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների	3,704,821	-	-	155,724	-	(150,044)
Վերահաշվարկ	(3,694,681)	3,694,681	125,165	(125,165)	418,850	(418,850)
Վերահաշվարկված մնացորդը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	10,140	3,694,681	125,165	30,559	418,850	(568,894)
Մնացորդը ըստ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների	7,117	3,929,881	-	138,792	-	(165,875)
Վերահաշվարկ	-	-	123,339	(123,339)	418,850	(418,850)
Վերահաշվարկված մնացորդը 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,117	3,929,881	123,339	15,453	418,850	(584,725)

17. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև բերվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Հասույթ

(i) Վաճառված ապրանքներ

Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում՝ սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների:

(ii) Ծառայություններ

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի չափով: Գործարքի ավարտվածության աստիճանը գնահատվում է իրականացված աշխատանքի ուսումնասիրության հիման վրա:

(բ) Արտարժույթ

(i) Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի վերափոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(զ) Աշխատակիցների հատուցումներ

(i) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար կամ շահույթի բաշխումներ, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(դ) Ծահուփահարկ

Ծահուփահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի կամ վնասի գծով վճարման կամ ստացման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները: Ընթացիկ հարկը ներառում է նաև շահաբաժիններից առաջացող հարկային պարտավորությունները:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի կամ վնասի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, չօգտագործված հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն հարկային հետևանքները, որոնք կարող են առաջանալ, եթե Ընկերությունը կիրառի այն մոտեցումը, որով ակնկալում է վերականգնել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Այս նպատակով ենթադրվում է, որ իրական արժեքով չափվող ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը կփոխհատուցվի վաճառքի միջոցով, և Ընկերությունը չի վիճարկել այս ենթադրությունը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե Ընկերությունն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Ընկերությունը մտադիր է ընթացիկ հարկային պարտավորությունները մարել և ընթացիկ հարկային ակտիվներն իրացնել զուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

(ե) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջինը մուտք՝ առաջինը ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսումները, արտադրական կամ փոխարկման ծախսումները և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումները:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(զ) Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում է զուտ հիմունքով «Այլ եկամուտ/Այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում:

(ii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործման հանձնելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած վերջինիս գնահատված մնացորդային արժեքը:

Մաշվածությունը սովորաբար ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների միավորի յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը:

Ստորև ներկայացված են հիմնական միջոցների հիմնական միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար:

- շենքեր 50 տարի
- մեքենա-սարքավորումներ 5-10 տարի
- տնտեսական գույք 5-10 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ե) Ներդրումային գույք

Ներդրումային գույքը պահվում է կամ վարձակալությունից եկամուտ վաստակելու կամ դրա արժեքի աճի, կամ էլ միաժամանակ այդ երկու նպատակներով, այլ ոչ՝ սովորական գործունեության ընթացքում վաճառքի կամ այլ արտադրությունում օգտագործելու, ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման, կամ վարչական նպատակներով օգտագործելու համար: Ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով, որի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Եթե գույքի օգտագործման նպատակը փոխվում է, որի արդյունքում այն վերադասակարգվում է որպես հիմնական միջոց, ապա վերադասակարգման ամսաթվի դրությամբ գույքի իրական արժեքը դիտարկվում է որպես վերջինիս սկզբնական արժեք հետագա հաշվառման համար:

Ներդրումային գույքը դուրս գրելուց կամ օտարելուց առաջացող օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից զուտ մուտքերի և այդ ակտիվի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն և ճանաչվում է շահույթում կամ վնասում դուրս գրելու կամ օտարելու ժամանակաշրջանում:

(ը) Ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները ներառում են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները ու բանկերում տեղաբաշխված միջոցները:

Ընկերությունը դասում է ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն այլ ֆինանսական պարտավորությունների դասին:

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ - ճանաչում և ապաճանաչում

Ընկերությունը փոխառությունները և դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ֆինանսական ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, երբ Ընկերությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվ իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են ֆիքսված կամ որոշելի վճարումներով ակտիվներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Այս ակտիվներն ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո փոխառությունները և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցների մնացորդները, ցպահանջ ավանդները և ձեռքբերման ամսաթվից մինչև երեք ամիս ժամկետայնությամբ բարձր իրացվելիությամբ ներդրումները, որոնք ենթարկվում են իրական արժեքի փոփոխության ոչ էական ռիսկի:

(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ - չափում

Ընկերությունը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Նման ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

(iii) Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկերի:

(թ) Արժեզրկում

(i) Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, ներառյալ բաժնեմասը բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրման օբյեկտում, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել՝

- պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից,
- Ընկերությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որն Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի,
- փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները,
- տնտեսական պայմանները, որոնք կապված են պարտականությունների չկատարման հետ,
- ակտիվ շուկայի վերացումն արժեթղթի համար,
- դիտարկելի տվյալները, որոնք վկայում են ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի չափելի նվազեցման մասին:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Ընկերությունը փոխառությունները և դեբիտորական պարտքերը դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի փոխառությունները և դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Արժեզրկման առանձին վկայություն չհայտնաբերելու դեպքում, փոխառությունները և դեբիտորական պարտքերը գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Փոխառությունները և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով ակտիվները:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Ընկերությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության կարծիքը, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ֆինանսական ակտիվի գծով արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ փոխառության և դեբիտորական պարտքի պահուստային հաշվում: Ընկերությունը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը և այդ նվազեցում է կարելի է անկողմնակալորեն վերագրել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքին, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ

Ընկերության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ ներդրմային գույքի, պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Օգտակար ծառայության ոչ սահմանափակ ժամկետ ունեցող կամ շահագործման համար դեռ ոչ պիտանի գույքիլի և ոչ նյութական ակտիվների համար փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր տարի նույն ժամանակ:

Գույքիլի գծով արժեզրկումից կորուստը չի հակադարձվում: Այլ ակտիվների գծով նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և անորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(ժ) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույթով, որն արտացոլում է տվյալ շուկայում փողի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Չեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

(հ) Վարձակալություն

(i) Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Ընկերությանն են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն:

Վարձակալության մյուս տեսակները հանդիսանում են գործառնական վարձակալություն, և այդ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(ii) Վարձակալության գծով վճարներ

Գործառնական վարձակալության գծով կատարած վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

18. Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Ընկերության գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը կիրառարակվի մի քանի փուլերով, և նախատեսվում է, որ ամբողջովին կփոխարինի Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: ՖՀՄՍ 9-ի առաջին մասը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների դասակարգմանը և չափմանը, հրապարակվել է 2009թ. նոյեմբերին: Երկրորդ մասը, որը վերաբերում է ֆինանսական պարտավորությունների դասակարգմանը և չափմանը, հրապարակվել է 2010թ. հոկտեմբերին: Երրորդ մասը, որը վերաբերում է հեջի ընդհանուր հաշվառմանը, հրապարակվել է 2013թ. նոյեմբերին: Ընկերությունն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ այդ փոփոխություններն էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց: Ընկերությունը մտադիր չէ կիրառել ստանդարտը ժամանակից շուտ:
- ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հասույթ» ստանդարտը կգործի 2017թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Թույլատրվում է ստանդարտի ժամանակից շուտ կիրառումը: Ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր», ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր», ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 15 «Անշարժ գույքի կառուցման պայմանագրեր», ՖՀՄՍԿ Մեկնաբանություն 18 «Ակտիվների փոխանցում հաճախորդների կողմից» և ՄՄԿ Մեկնաբանություն 31 «Հասույթ. բարտերային գործարքներ, որոնք ներառում են գովազդային ծառայություններ»: Ստանդարտի հիմնական սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունները պետք է ճանաչեն հասույթը՝ ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն գումարներով ներկայացնելու համար, որոնք արտացոլում են հասուցումը (այսինքն՝ վճարումը), որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ ապրանքների կամ ծառայությունների դիմաց: Նոր ստանդարտով կպահանջվեն նաև լրացուցիչ բացահայտումներ հասույթի համար, կտրամադրվի ուղեցույց նախկինում համապարփակ կերպով չուսումնասիրվող գործառնությունների համար, կկատարելագործվեն մի քանի բաղադրիչներից բաղկացած համաձայնություններին վերաբերող ուղեցույցները: Խումբը դեռ չի վերլուծել այս ստանդարտի հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա: Խումբը մտադիր չէ կիրառել ստանդարտը ժամանակից շուտ:

- Բազմաթիվ «ՖՀՄՄ-ների կատարելագործումները» դիտարկվել են առանձին՝ ըստ յուրաքանչյուր ստանդարտի: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հաշվառման փոփոխություններին, կգործեն 2014թ. հուլիսի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը դեռ չի վերլուծել այս կատարելագործումների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա